ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3.

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

7 դեկտեմբերի 2019թ.

Նախագահ Կ.Հ. Հովսեփյան

Քարտուղար Ք.Վ.Օթարյան

Ներկա էին խորհրդի անդամները և տնօրենի պաշտոնակատար պ-ն Ա.Մակարյանը, « Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների » ամբիոնի դասախոս Ռ.Յոլչյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Առաջին ընթացիկ ստուգումների և քննությունների արդյունքների ամփոփում:

*/զեկ. Կ.Հ.Հովսեփյան/*

*2.* Ֆակուլտետի ուսումնական, գիտահետազոտական աշխատանքի և պրակտիկայի հարցերի քննարկում:

*/զեկ. Կ.Հ.Հովսեփյան/*

3. 2019-20թթ. ուս. տարվա I կիսամյակի քննաշրջանի գրաֆիկի հաստատում:

*/զեկ. Կ.Հ.Հովսեփյան/*

4. 2019-20թթ. ուս. տարվա ավարտական և կուրսային աշխատանքների թեմաների հաստատում:

*/զեկ. Կ.Հ.Հովսեփյան/*

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց ֆակուլտետի դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Կ.Հովսեփյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում է Կ.Հ.Հովսեփյանը:

1. ԼՍԵՑԻՆ- Առաջին ընթացիկ ստուգումների և քննությունների արդյունքների ամփոփում:

Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ Կ.Հովսեփյանը: Նա ներկայացրեց Ի/ԿՄ կրթական ծրագրով ինֆորմատիկա և քարտեզագրություն և Կ/Գ կրթական ծրագրով աշխարհագրություն մասնագիտությունների առաջին ընթացիկ ստուգումների և քննությունների արդյունքների առաջադիմությունը՝ համեմատություն անցկացնելով նախորդ տարվա առաջադիմության հետ:

Աշխարհագրություն մասնագիտության III, IV կուրսի միջին գնահատականը

| 2018-19 ու.տարի | 2019-20 ուս. տարի |
|---|---|
| 5.48 | 6.22 |

Ինֆորմատիկա մասնագիտության I, II,III,IV կուրսերի միջին գնահատականը

| 2018-19 ու.տարի | 2019-20 ուս. տարի |
|---|---|
| 5.76 | 5.89 |

Փաստերից երևում է, որ աշխարհագրություն մասնագիտության միջին առաջադիմությունը բարձրացել է 0,74-ով, Ինֆորմատիկա մասնագիտության առաջադիմությունը բարձրացել է 0,13-ով:

2. ԼՍԵՑԻՆ - Ֆակուլտետի ուսումնական, գիտահետազոտական աշխատանքի և պրակտիկայի հարցերի քննարկում:

Օրակարգի երկրորդ հարցի մասին խորհրդի նախագահ Կ.Հովսեփյանը ներկայացրեց 2019-20 ուստարվա ուսումնական, գիտահետազոտական աշխատանքների, պրակտիկաների կատարման հարցը: Նա նշեց, որ ֆակուլտետում իրականացվում են ԳՏՏԿ-ի, Level Up-ի կողմից ծրագրավորման լրացուցիչ դասընթացներ, որոնք միտված են ինչպես հետազոտական աշխատանքների զարգացմանը, այնպես էլ ուսանողների՝ որպես մասնագետների կայացմանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա. Հովակիմյանը նշեց, որ անհրաժեշտ է որոշ փոփխություններ կատարել ուսումնական առարկանների ցանկում, ներառելով մոբայլ ծրագրավորման հետ կապված առարկաներ, կամընտրական հիմունքներով: Անհրաժեշտ է նաև հստակեցնել միջառարկայական կապերը:

Գ.Սիմոնյանը ներկայացվածի մասին համակարծիք էր, ընդգծելով՝ կրթական ծրագրերի կիրառման նշանակությունը:

Ինֆորմատիկա մասնագիտության 3-րդ կուրսի արտադրական պրակտիկայի ղեկավար Ք.Օթարյանը ներկայացրեց իր մտահոգացումները պրակտիկայի կազմակերպման վերաբերյալ: Նա ներկայացրեց, որ ՀՀ պոտենցիալ գործատուների հետ ծանոթանալու նպատակով կազմակերպել է այցելություն DigiTec Expo-2019 ցուցահանդեսին III կուրսի ուսանողների մասնակցությամբ, որն արտացոլում է հայկական ՏՀՏ շուկայի իրական պատկերը և հնարավորություն է տալիս ծանոթանալու նոր ձեռքբերումներին, խնդիրներին, ինչպես նաև ոլորտի հեռանկարներին: Ակադեմիական ուսուցման ընթացքում ձեռք բերված գիտելիքները գործնականում կիրառելու, աշխատանքային միջավայրում աշխատանքային փորձ ձեռք բերելու նպատակով «ՎԵԿՏՐ» ՓԲԸ, «Արմաթ» ԱՏՁՄ, «Level up1» կազմակեր-պությունների ղեկավարների հետ ձեռք են բերվել համաձայնություններ, որպեսզի մեր որոշ ուսանողներ անցնեն պրակտիկա նշված կազմակերպություններում:

Ուսանողները ունեն նաև ազատ ընտրության հնարավորություն մինչև փետրվար ամիսը ներկայացնելու իրենց նախընտրած կազմակերպությունները, որպեսզի համապատասխան կազմակերպությունների հետ կնքվեն պայմանագրեր:
Հաստատման մասին եղավ ընդհանուր առաջարկ:

Ռ.Յոլչյանը և Գ.Գուլակյանը ներկայացրեցին ինֆորմատիկա մասնագիտության ուսանողների հետ գիտահետազոտական աշխատանքներ կատարելու վերաբերյալ առաջարկ՝ ստեղծել գիտա-ուսումնական լաբորատորիա, որտեղ կկազմակերպվեն պարապմունքներ ինչպես «Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների» այնպես էլ «Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության» ամբիոնների առար-կաներից: Ռ. Յոլչյանը ամփոփ նկարագրեց ռազմավարությունը և ֆինանսական կանխատեսումները:

Ա.Մակարյանը նշեց, որ հարկավոր է ներկայացնել դրամաշնորհային ծրագիր:
ՈՐՈՇԵՑԻՆ – հանձնարարել «Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների» ամբիոնին կազմել մոբայլ ծրագրավորման դասընթացի առարկայական ծրագիրը և ներկայացնել գիտխորհրդի հաստատմանը:

3.ԼՍԵՑԻՆ-2019-20թթ. ուս. տարվա I կիսամյակի քննաշրջանի գրաֆիկի հաստատում:

Օրակարգի երրորդ հարցի մասին խորհրդի նախագահ Կ.Հովսեփյանը ներկայացրեց, որ կազմված է I կիսամյակի քննաշրջանի գրաֆիկը, որը նախապես համաձայնեցվել է դասախոսների և ուսանողների հետ: Դասավանդող բոլոր դասախոսները պարտադիր իրենք են անցկացնելու քննությունները, որոնք կանցկացվեն տեսախցիկներով լսարաններում:

ՈՐՈՇԵՑԻՆ-Ներկայացնել ուսումնամեթոդական վարչություն հաստատելու I կիսամյակի քննաշրջանի գրաֆիկը:

4. ԼՍԵՑԻՆ - 2019-20թթ. ուս. տարվա ավարտական և կուրսային աշխատանքների թեմաների հաստատում:

Խորհրդի նախագահ Կ.Հովսեփյանը ներկայացրեց ավարտական և կուրսային աշխատանքների թեմաների վերնագրերը:

5. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Տնօրեն Ա.Մակարյանը առաջարկեց, որ վերնագրերի հետ միասին ներկայացվի նաև անոտացիա, որպեսզի պատկերացումը թեմայի վերաբերյալ, վերջնարդյունքները լինեն հստակ:

ՈՐՈՇԵՑԻՆ-

1.Ավարտական աշխատանքների թեմաների վերնագրերի հետ միասին դասախոսներից պահանջեն նաև անոտացիա և թեմայի վերնագրերը հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով:

2.Ներկայացնել ուսումնամեթոդական վարչություն հաստատելու 2019-20թթ. ուս. տարվա ավարտական և կուրսային աշխատանքների թեմաները:

ՆԱԽԱԳԱՀ Կ.Հ.ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Ք.Վ.ՕԹԱՐՅԱՆ